ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ԳԵՏԱՇԵՆԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

N 73

“ 06 ” 05. 2017թ.

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՊԱՐՈՆ Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆԻՆ

Հարգարժան պարոն մարզպետ

Ձեզ է ուղարկվում Արմավիրի մարզի Գետաշեն համայնքի ղեկավարի 2017 թվականի ապրիլ ամսվա արձակած կարգադրությունները և ընդունած որոշումները:

Առդիր 6 թերթ:

ԳԵՏԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Գ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ԳԵՏԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

“ 03 “ ապրիլի 2017թ. N 05

Կարեն Էդմոնդի Գրիգորյանի մասին

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, 112-րդ, 2-րդ կետով և հիմք ընդունելով Կարեն Գրիգորյանի դիմումը

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ

2. Կարեն Էդմոնդի Գրիգորյանին ազատել Գետաշենի համայնքապետարանի պահակի պաշտոնում 2017 թվականի ապրիլի 3-ից դիմումի համաձայն:
3. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

Գետաշեն գյուղական
Համայնքի ղեկավար Հովհաննիսյան Գ.

03 ապրիլի 2017թ.
Գ. Գետաշեն
Ժամը 15:30

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԳԵՏԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

“ 28 “ ապրիլի 2016թ. N 06

Արկադիա Գագիկի Հովհաննիսյան մասին

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 158-րդ հոդվածի 1-ին մասով, 163-րդ հոդվածով, «Տեղական Ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 17-րդ կետով և հիմք ընդունելով Գագիկ Հովհաննիսյանի դիմումը

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ

1. Գագիկ Արկադիայի Հովհաննիսյանին, Գետաշեն համայնքի ղեկավար, տրամադրել ամենամյա արձակուրդ 2017 թվականի մայիսի 2-ից 24 աշխատանքային օր (20 նավազագույն, 4 լրացուցիչ) տևողությամբ:
2. Գագիկ Հովհաննիսյանիբացակայության ժամանակ նրա լիազորությունների կատարումը վերապահել համայնքի ղեկավարի տեղակալ Արկադիա Հովհաննիսյանին
3. Գագիկ Հովհաննիսյանին աշխատանքի մեջ համարել 2017 թվականի հունիսի 5-ից:

1. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

Գետաշեն գյուղական
Համայնքի ղեկավար Հովհաննիսյան Գ.

28 ապրիլի 2017թ.
Գ. Գետաշեն
Ժամը 11:10

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ԳԵՏԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

---

*“ 28 “ ապրիլի 2016թ.* *N 07*

Սուքիաս Մուխաելի Սուքիասյան մասին

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 94-րդ հոդվածի 1-ին կետով, «Տեղական Ինքնակառավարման մասին» Յայաստանի Յանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 5-րդ կետով և հիմք ընդունելով Սուքիաս Սուքիասյանի դիմումը

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ

1. Սուքիաս Մուխաելի Սուքիասյանին նշանակել Գետաշենի համայնքապետարանի պահակի պաշտոնում 2017 թվականի մայիսի 2-ից անորոշ ժամկետով:
2. Աշխատավարձի չափը սահմանել 73000 (յոթանասուներեք հազար) ՀՀ դրամ:
3. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

Գետաշեն գյուղական
Համայնքի ղեկավար Հովհաննիսյան Գ.

28 ապրիլի 2017թ.

Գ. Գետաշեն

Ժամը 12:00

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ԳԵՏԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ

"26" ապրիլի 2017թ.

N 05-Ա

## ԻՐԱՎՈՒՆՔ ՀԱՍՏԱՏՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՉՊԱՀՊԱՆՎԱԾ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԲՆԱԿԵԼԻ ՏՆԵՐԻ ՇԵՆՔ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Արմավիրի մարզի Գետաշեն համայնքի բնակիչ Ստյոպա Տիգրանի Խաչատրյանը ծնվ. 03.01.1962 թվականին, Ղազարյան Ջվարթ Վաղարշակի ծնվ. 01.05.1937 թվականին, դիմել է Գետաշեն համայնքի 10-րդ փողոց, տուն N 11 հասցեում գտնվող օրինական տնամերձ հողամասի վրա կառուցված բնակելի տուն և շենք-շինությունների նկատմամբ իրավունքները վերականգնելու խնդրանքով, որը օրենքի ուժով կարող է փոխանցվել անհատույց սեփականության իրավունքով:

Հաշվի առնելով, որ կառույցը իրականացվել է մինչև 15.05.2001թ և դրա պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները ու օրենքով պահպանվող շահերը, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չի առաջացնում հարկադիր սերվիտուտի իրավունք, հողամասը համապատասխանում է ՀՀ Հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1,2,3 ենթակետերով սահմանված պահանջներին և ընդգրկված չէ նույն օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում, ղեկավարվելով ՀՀ Հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 8-րդ կետով, ՀՀ կառավարության 18.05.2006թ. թիվ 912 Ն որոշման կարգով սահմանված և սույն որոշման 22-րդ կետի 1-ին ենթակետով, "Տեղական Ինքնակառավարման մասին" ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 17-րդ կետով, "Հայաստանի Հանրապետության համայնքների վարչական տարածքներում իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին" Հայաստանի Հանրապետության օրենքով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Վերականգնել Արմավիրի մարզի Գետաշեն համայնքի 10-րդ փողոց, տուն N 11 հասցեում գտնվող գույքային միավորի նկատմամբ Ստյոպա Տիգրանի Խաչատրյանի (ծնվ. 03.01.1962թ.) և Ջվարթ Վաղարշակի Ղազարյանի (ծնվ. 01.05.1937թ.) գույքային իրավունքները ճանաչելով նրա սեփականության իրավունքը
    - օրինական տնամերձ հողամաս 0, 2474 հա
    - 1967թ. կառուցված բնակելի տուն 107,70 քմ
    - 1967թ. կառուցված ծածկ 66,20 քմ
    - 1967թ. կառուցված բնակելի տուն 131,00 քմ
    - 1967թ. կառուցված ծածկ 49,50 քմ

- 1971 թ. կառուղված մատուռ 5,80 քմ
- 1997 թ. կառուցված զուգարան 1,50 քմ
- 1985թ. կառուցված մառան 22,80 քմ
- 1985 թ. կառուցված անասնաշենք 23,10 քմ

2. Առաջարկել Հ.Հ. ԿԱ ԱԳԿ ՊԿ համապատասխան ստորաբաժանմանը կատարելու սույն որոշմամբ նշված գույքի նկատմամբ սեփականության իրավունքների պետական գրանցում:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

*Գետաշեն գյուղական համայնքի ղեկավար*

*Գ. Հովհաննիսյան*

*2017թ. ապրիլի 26*

*գ. Գետաշեն*

*ժամը 10:00*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ԳԵՏԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ

“ 26 ” ապրիլի 2017թ. N 06

## ԳԵՏԱՇԵՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 5-ի թիվ 41-Ն որոշման 2-րդ կետը*

Որոշում եմ

1. 2017 թվականի բյուջեի 01-1-1 նախահաշվի 4241 հոդվածից 126 000(մեկ հարյուր քսանվեց հազար) ՀՀ դրամը տեղափոխել 4823 հոդվածին:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

*Գետաշեն գյուղական համայնքի ղեկավար* *Գ. Հովհաննիսյան*

*2017թ. ապրիլի 26*

*գ. Գետաշեն*

*ժամը 11:30*